

Հայ Եկեղեցին ճգնաժամ մը կ'անցը-
նէր: Օտար յարձակումի մը ենթարկուած
էր առանց ունենալու ինքնապաշտպանու-
թեան ուէ միջոց: Հայ վանքերը գրեթէ
բոլորն ալ անշքացած էին: Հազիւ մի քանի
վանքերու մէջ կը պլպլար ուսման ու կըր-
թութեան կանթեղը, զոր վառ պահել կը
ջանային մի քանի եկեղեցականներ սոսկ
անհատական նախաձեռնութեամբ, և կար-
ծես բնագոյով մղուելով Հայ Եկեղեցին զօ-
րացնելու ջանքեր ընելու:

Այս անհատներէն մին էր Բարսեղ վրդ.
Գաւառցի (✱ 1615) որ Բաղէշի Ամրտուու
հին ու քայքայման հասած վանքը քակեց
և «իմեմ վերսին հիմնարկեալ շինեաց եւ կա-
սարեաց գրովանդակն, զեկեղեցին եւ զսներն եւ
այլն որ ի նոսա» (Դաւրիժեցի): Յետոյ վա-
յելչացուց Ամրտուու հին Դասադուռ, մշա-
կելով արտաքին գիտութիւնները, որոնց
գլխաւորներն էին քերականութիւն և փի-
լիսոփայութիւն, միշտ Դաւիթ Անյաղթի
խրթին և մթին թարգմանութեանց վրայ:
Բարսեղ որ էր «յոյով աշակերաց սեր» իր
Դասադուռ մէջ ճանչցուց անոնց «արսափն
գիտութիւնները»: Բարսեղ վրդ. «յիմեմնի իսկ
գիտակ եր քե գիտութիւն արսափն իմաստից եւ
փեսականութեան ո՛չ գոյ ի մեջ վարդապետացն
Հայոց, եւ իմեմ սարփանօք ըղձայր քե-

Ամրտուու
Գաւառցի
Բարսեղ